ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՍԻՐԱՆՈՒՇ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՓԱՐԻԶ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Սիրանուշ Շահմուրադյան,

   Արմինե Պետրոսյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության շուկայի հետազոտության բաժնի գլխավոր մասնագետ,

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության առևտրի խթանման բաժնի ավագ մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզ), 2023թ. հունիսի 13-ից 18-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   «ԷմԷսԷլ Ֆրանս/Վիվա Թեքնոլոջի» ընկերություն:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն 2023 թ. հունիսի 14-ից 17-ը Ֆրանսիայի Հանրապետությունում (ք. Փարիզ) տեղի ունեցած «VIVATECH 2023» միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսին:

6. Քննարկված թեմաները.

«VIVATECH 2023» ցուցահանդեսի շրջանակում հանդիպումներ են տեղի ունեցել Էստոնիայի Հանրապետության, Իտալիայի Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության, Չեխիայի Հանրապետության, Ճապոնիայի, Հնդկաստանի Հանրապետության, Հարավաֆրիկյան Հանրապետության ու այլ երկրների ներկայացուցիչների հետ: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել շարունակել քննարկումները ոլորտային համագործակցության ընդլայնման, ներդրումների ներգրավման, տեխնոլոգիական կենտրոններ փոխադարձ այցելությունների կազմակերպման նպատակով:

Ցուցահանդեսի շրջանակում հայկական տաղավարում կազմակերպվել է «Հայկական տեխնոլոգիական ցանցի գլոբալ օգտագործումը՝ հնարավորություններ և մարտահրավերներ» խորագրով գործարար համաժողովը, որի նպատակն էր նույն հարթակում համախմբել տարբեր պետությունների հայկական համայնքի (Ֆրանսիայի Հանրապետություն, ԱՄՆ, Նիդերլանդների Թագավորություն և այլն) տեխնոլոգիական ոլորտի ներկայացուցիչներին և ներդրողներին, քննարկել Հայաստանում բարձր տեխնոլոգիական ոլորտի ներդրումային հեռանկարները, ներկայացնել հայկական ոլորտային ընկերությունների գործունեությունը, տարածաշրջանում ՀՀ ոլորտային բարձր ցուցանիշները, զարգացման հիմնական ուղղությունները:

Համաժողովի շրջանակում հայկական միասնական տաղավար են այցելել տարբեր պետությունների ոլորտային ընկերությունների ներկայացուցիչներ:

Էստոնիայի «SA TALLINNA TEADUSPARK TEHNOPOL» ընկերության ներկայացուցիչ Ինդրեկ Օրավը հետաքրքրություն է հայտնել ծանոթանալ ՀՀ ստարտափ էկոհամակարգի հաջողություններին և տեխնոլոգիական կենտրոնների գործունեությանը: Համաժողովի շրջանակում Ինդրեկ Օրավը ելույթով ներկայացրել է Էստոնիայի, որպես Եվրոպայում առաջատար ստարտափ էկոհամակարգ ունեցող պետության փորձը, ոլորտի զարգացման ուղղությամբ Էստոնիայում իրականացվող քաղաքականությունը:

«IG DRONES» դրոններ արտադրող հնդկական ընկերության ներկայացուցիչ Օմ Պրակաշ Դասը ընդգծել է Հայաստանի հետ համագործակցության կարևորությունը:

Հարավաֆրիկյան Հանրապետության պատվիրակության ներկայացուցիչները հետաքրքրվել են «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների գործունեությամբ և լաբորատորիաները Հարավաֆրիկյան Հանրապետության կրթական համակարգում ներառելու հեռանկարներով:

Համաժողովի մասնակիցները ներկայացրել են բարձր տեխնոլոգիական ոլորտում իրենց փորձը և մոտեցումները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ցուցահանդեսի շրջանակում Սիրանուշ Շահմուրադյանը և Արմինե Պետրոսյանը մի շարք հանդիպումներ են ունեցել:

Ֆրանսիայում հայ ուսանողների միության անդամներին ներկայացվել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իրականացվող ծրագրերը, ՀՀ տեխնոլոգիական ոլորտի ձեռքբերումները, ցուցահանդեսի մասնակից ընկերությունների արտադրանքն ու ծառայությունները:

Ֆրանսիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. տիկին Հասմիկ Տոլմաջյանն այցելել է հայկական տաղավար, ծանոթացել հայկական ստարտափ ընկերությունների նորարարական արտադրանքին ու լուծումներին:

Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովում Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Անն-Լորանս Պետելի հետ հանդիպմանը քննարկվել են երկու պետությունների միջև համագործակցությանն առնչվող հարցեր:

Ցուցահանդեսի ընթացքում հայկական միասնական տաղավար են այցելել Ֆրանսիայի Էքս-Մարսել-Պրովանս մետրոպոլի փոխնախագահ, քաղաքային խորհրդի ավագանու անդամ Դիդիե Փարաքյանը, Կուրբըվուայի քաղաքային խորհրդի ավագանու անդամ Ժան-Ժաք Սարաջյանը, Սինգապուրի Հանրապետության կապի և տեղեկատվության նախարարության Կապի զարգացման միասնական գրասենյակի ավագ մասնագետ

Մոհամեդ Բիսմիլլահ Բին Աբդուլ Ազիզին, Վրաստանի արդարադատության նախարարության պատվիրակության անդամներ:

Հայկական տաղավար են այցելել նաև Ֆրանսիայի հայ համայնքի մի շարք ներկայացուցիչներ, այդ թվում՝ Ժաք Թերզիանը, Ժուլիա Մանիեն, ինչպես նաև միջազգային խոշոր ընկերությունների ներկայացուցիչներ (Orange, Google, PNB ParisBas, L'Oréal, Crédit Agricol, Réneau, FrenchTech, AfricaTech, Vimeo, Veolia, SkyDeck և այլն):

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ Էստոնիայի, Լատվիայի, Ճապոնիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Չեխիայի, Հնդկաստանի, և Հարավաֆրիկյան Հանրապետության պատվիրակությունների և ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ շարունակելու քննարկումները բարձր տեխնոլոգիական ոլորտում փոխգործակցության ընդլայնման վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ՍԻՐԱՆՈՒՇ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆ
21.06.2023 թ.

ԱՐՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
21.06.2023թ.